փարթամքք աղքատացան, և աղքատք բոլորովիմբ չքաւորեցան։ Մուսուլու գիւղօրէքն ոչնչացան. պաղատառ եղեալ ժողովուրդն, ոմանք ի սովու և ոմանք ի ջրոյ մեռան ասէ, և այլն։ Յանցեալում աւուրն եկն ասա թագաւորական հրաման, զի իւրաքանչիւր քաղաքացի զիւր ցորեանն այլոց ոչ վաճառիցէ, այլ իւրաքանչիւր քաղաքացի վաճառեսցէ իւրեանց քաղաքացւոյն։ Այսու յայտ է, թէ ի թմչվարու և ի վարատինու ցորենն ի խրուատլիի երկիրն տանելոց են։ Թուրքն եթէ կամիցի պատերազմն առնել ընդ կայսերն, ոչ գայ ի պելկրատ, այլ ի յերկուս յառաջս բաժանելով, ոմանք ի նոցունց ի կողմն խռվատլիու գնան և ոմանք ի մաճառու. Թուրքի թագաւորն եթէ կամիցի պատերազմ առնել ընդդէմ քրիստոնէից, նախապէս ոչ առնէ ընդ սմա, այսինքն ընդ կայսերն, այլ ընդդէմ մօսկօֆին, ըստ որում ոմանք ստանօր ի մեծամեծաց այսպէս տրամաբանեն։ Աղքա ի կողմն խռվա[տ]լիէն չատ ազգեր ունին։ Աստ հարկաւորապէս թա[ն]կանայ հացն և միսն, զի ըստ մեծի մասին քաղաքիս միսն և ալիւրն յայլմէ երկրէ գայր ասա, զի պէլկրատու հողն թմչվարու պէս չէ . . . ։

Գերայարգութեան քում

Ցամի տեառն 1734 *Նուաստագոյն ծառայ*

նոյեմբերի 4 *Եղիա վարդապետ*

[Պելկրատ]

ԾՋ.

Հայ ծխական հարցերու շուրջ իրր նոր վաւերաթուղթ մը կը ներկայացնենք հետևեալ գիրը։ Ամենէն աւելի ուշագրաւն է՝ պատարագի ճաշակումէն առաջ ներմուծուած Սրբութեան ի Բազմոցի հանդէսը։

Գերապայծառի Տեառն Տեառն Մխիթարի Աբբայհօրդ մերոյ
գերազանցի Աստուածաբանութեան Վարդապետի, ողջոյն սիրոյ և յարգութեան

. . . Խուլ տէր մելքիսէդն եկեալ ձգեաց զայս ղուլղուլէս ի Կոստանդնուպօլիս, թէ սուրբ Փողոմն տէստուր ետ Ջահկցոց խորհրդատետրոմն պատարագել և պաթալ եղեւ հայոցն։ Նաև ասէ. ոմանք ուսան զփիլիսոփայութիւն, և ոմանք զչառթազանութիւն[1]. իսկ ես ստացայ ասել զժամերգութիւնն և զխորհրդատետրն Ջահկցոց. նաև ի վերջն նախ քան զճաշակելն սրբութեան ի պատարագին դնէ զսրբութիւնն ի ճառագայթին և այնու խաչակնքէ զժողովուրդն, և ապա ճաշակէ, յորմէ ոմանք տգէտք տեսեալ զարմանան և ոմանք գայթակղին.... յանցեալում տարւոջ մինչ պուռսացի յովսէփ վ.ն և տիրկէր յակոբ վ.ն զծնունդ տեառն Նոր տումարովն արարին, յօհան վ.ն թագիր անել ետ վիքարին և Ծնական ղոչ. փէնա[2]. բայց յայս տարւոջ զեպիսկոպոսի միտն դարձոյց և նոր տումարով Ծնունդ արար ի սուրբ անդօն եկեղեցւոջ ձայնաւոր պատարագաւ և հարիւր հայ տիրացուներով։ Եթէ այսպէս է՝ մեզ ևս թող տէստուր տան Նոր տօմարով անել, քանզի և ժողովրդեան մեծ մասն ևս նոր տօմարով վարին, հայելով ի հայ կարգաւորաց վարիլն Նոր տօմարով. եթէ կամիք գրեցից զայս բանս սուրբ ժողովին. բաւ է. ողջ լերուք ի տէր։

1734 *Ն. Ծոյ. Տ[էրութեան] Ձ[երոյ]*

դեկտ. 27 **Թօմաս Վ. Թէոդոսեան,**

[Կ. Պոլիս]

---

1. *Ճարտասանութիւն։*

2. Pena = *պատիժ, տուգանք։*